ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

ՀԱՄԱՌՕՏ.

Բազմարդիւն և արժանայիշատակ Միքէոն Կաթուղիկոսի աշխատասիրած այս պատուական և հետաքրքրական գիրքը ի լոյս ընծայուեցաւ Մայր Էթոռոյս տպարանէն։

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բաղում անցից և աղետից նկարագիրը, Սսոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նա և Պոլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յականէ յանուանէ, ոմանց Վանօրէից, Վիճակաց, և Նուիրակական տնօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք։

Որքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սսոյ և Էջմիածնի իրաւասութեան ևլն. նկատմամբ ի ներքուստ և յարտաքուստ լարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնը հաղորդել Ազգիս։

Գինն է առանց ծախուց ճանապարհի դ. ՀՈ-ԷՎ։

ՁԵՑՆԵԳՐԵԼ.

ԵՐԴԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ.

Թէ՛ ծանր (տաղաւար ևլն) և թէ՛ լուր աւուրց համար Ս. Պատարագի երգեցողութիւնք՝ Մեղեդիք, տաղք, և ամեն բան՝ ինչ որ Ս. Պատարագի երգեցողութիւնքը ըստ աւուր պատշաճի կիրաղմեն՝ բաց ի Ն՛աշու Շ՛արականաց, երկու կերպ (ձանր և յորջոր) ձայնագրեալ տպագրելով ի լոյս ընծայեցաւ։

Որա մէջ առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց մի քանի կարևոր Երգեր ևս իրրև ի Յաւելուած տպուած են.

Գինն է ֆոռն ոբլ։